(12 հատոր), Աշխարհագրութիւն Նոր Հայաստանի, Աշխ. Հայաստանի, Ած.աբանութիւն (4 հատոր), Ատլաս աշխարհացոյց (մեծադիր), Ընդաշխարհիկ բառարան, Բառգիրք (երից վարդապետաց) 2 հատոր, Բառգիրք արուեստից և գիտութեանց, Բեւեռագիր արձանագրութիւնք, Բժշկ. բառգիրք, Ենթակայն (գրբ. և աշխ.), Երգք Հայաստանեայց Եկեղեցւոյ, Երդումն հին Հայոց մէջ, ընտիր Հայկազունք, Թանգարան հին և նոր հայկ. դպրութեանց, Հայապատում, Հայբուսակ, Հայկական Մատենագիտութիւն, Հայկ. նոր Մատենագիտութիւն, Հայկ. ուսումնասիրութիւն, Հայկ. տպագրութիւն, Հայ կայսերք, Հայկ դիւցազն, Հայ-Վենետ, Մլքէի Աւետարան, Մխիթար (բացառիկ թերթ), Մխիթ. Միաբանութիւն (տպ. 1905), Յուշիկք հայրենեաց Հայոց, Նուագք, Ճառք ընտիր Մատենագրաց նախնեաց, Ճառք Մատենագրութեանց նախնեաց, Պատկերք Պատմութեան Հայոց (Ֆրնս. 3 հատոր), Պատմ. հայկ. տպարանաց, Պատմ. (նաեւ փոքր) Մխիթ. Աբբայի, Սիսական, Սիսուան, Սոփերք հայկականք, Փաւստոս Բիւզանդ, Քարտէզք աշխարհացոյց, Քերականութիւն (Բագրատունի), Քրոնիկոն, եւն. եւն.: Ասոնցմէ զատ Մխիթարեանք տպագրած են գեղարուեստական շքեղ պատկերներ և քարդեր Հայոց Պատմութեան և Մատենագրութեան երեւելի դէմքերուն (որոնց «Փանթէօն» նմանակողրուշմներն ալ), պատմական տեսարաններ եւն.: — 124 տարիէ ի վեր գոյութիւն ունեցող այս տպարանին (որ իր առանձին ձուլարանն ու կազմատունն ալ ունի) անվերջ հրատարակութեանց մէջ պէտք է հաշուել Հայութիւնը շահագրգռող Եւրոպ. լեզուներով բազմաթիւ գիրքեր ալ:

19. **Ց. Պոյաճեան** — Այն օրէն ի վեր որ Մխիթար իր սեպհական մամուլն ունեցաւ, Վենետիկի մէջ օտար տպագրիչներ այլ եւս դադրած են հայերէն գիրք տպելէ: 1911 ին միայն կը հանդիպինք մի ոմն **Ց. Պոյաճեանի** որ նոյն տարին (Փետր. — Ապր.) 3 թիւ «Աստղիկ» պատկերազարդ ամսաթերթը կը հրատարակէ Վենետիկի մէջ: Այնուհետեւ տպարան և Աստղիկ կը մարին՝ գոցելս Մխիթարեանց Արեւին բորբ պայծառութեանը տակ:

ԲԱՎԻԱ

20. **Թեսէոս Ամբրոսիոս** — Իտալ. Ալպանեզի ազգատոհմէն, ծնած է 1469 ին և մեռած 1540 ին: Հմուտ ասորի և քաղդէական լեզուներու՝ ատոնց դասատուութեան համար ուսուցիչ կարգուած է Պոլոնիոյ համալսարանին: Լատերանի կանոնիկոսներու Ուխտէն է այս կղերականը որ 'ի Բավիա 1539 ին հրատարակած է լատին լեզուաւ գիրք մը՝ **Ներածութիւն ի Քաղդէական, ասորական, հայերէն եւ յայլ 10 լեզուս** տիտղոսով, որ կը պարունակէ այլ եւ այլ լեզուաց այբուբեններ՝ թուով իբր 40, անոնց փոխադարձ ձեւերով, նաեւ «գիտնալու արժանի՝ խորհրդանշական և հմայական բաներ»: Ուրեք ուրեք կարմիր տպագրուած այս հնաքրքրական գիրքէն Վիեննայի Մխիթարեանց Մատենադարանը կը գտնուի օրինակ մը, որմէ՝ համդիպակաց էջին պատկերը հանեցաւ մեզ ուղարկել Հ. Մէնէվիշեան: Պատկերիս խորագիրին թարգմանութիւնն է «Յաւելուած բազմաց»: Մէջ բերուած հայերէն հատուածները քաղուած են Ս. Գիրքէն, միօրինակ տառերով, գրէթէ առանց գլխագիրի: — Theseus Ambrosius-ի այս մատեանին վրայօք համառօտակի խօսած է Հ. Ա. Վարդանեան՝ «Հանդէս Ամսօրեայ»ի այս տարուան Մայիսի թիւին մէջ, «Տպագրութեան 400 ամեակին առթիւ» վերնագրով: